Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20093
2002

ԱՄԱՎԵՐՋԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՆՈՐ-ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ Գ.-ՔԱՆԱՆԵԱՆ,
Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ
ԵՒ
ԳԷՈՐԳ.-ՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԻԶԻ
(ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍ)
1915—1916

1916
ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉՅԱՆ ՎԱՆԱՑ
ԶՈՒՂԱ—ՍՊԱՀԱՆ

Ե. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

372
С-93

372
Ն-93

ԱՄԱՎԵՐՋԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ Գ.-ՔԱՆԱՆԵԱՆ,
Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ
ԵՒ
ԳԷՈՐԳ-ՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԻԶԻ

(ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍ)

1915—1916

Լ. Գ. ՄՐՆԶՄԵԱՆ

2010

2002

1916
ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆԱՑ
ՋՈՒՂԱ—ՍՊԱՀԱՆ

94017-42

2098-2002

1915—1916 ՈՒՍ. ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄՆ. ՈՒ ՆՐԱՆՑ ԿՐԹԱԿԱՆ ՑԻՆՉԸ.

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԻՒԸ՝ ՏԵՍՉԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ 29 Ի ԵՂԵԼ. ԵՒԵՐԿՈՒՆԵՐՆ ՈՒ ՊԱՇՏՕՆՆԵՐԸ ՐԱԾԱՆՈՒԱԾ ԷԻՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԿԵՐԳՈՎ

	Անուն եւ ազգանուն ուսուցչի.	Ո՞rտեղ է սովորել	Աւանդած առարկաները	Հաշուարկային դասերի թիւը	Պիտի պատրաստուի	Քաց է բոլոր	Ուշացել է	Պարապել է	Ունեցած պարգեւատրած դասը.	Ո՞ր թուականից է պաշտօնավարում	Ծանօթութիւն
1	Աբգարեան պարոն Յովսէփ	Կալկաթայի հայոց Մարդաս. Ճեմարան	Թուաբ. ալգեբրա, երկրաչափ.	28	785	—		785	3	1913	
2	» » Ստեփան	Կալկաթայի անգլիական (տղայոց) «հայսկուլ» դպրոցի. հայոց Մարդ. Ճեմ. և Սէնտ Զավիրս կոլէճի վկայականներով. վկայուած ուսուցիչ Սըր Ա.լզէկ Բիամէնի դպրոցից.	Թուաբ. տոմարկ. բնապատմ. ալգեբրա.	26	728	9		719	9	1901	
3	Աբգարեան պարոն Տիգրան	Կենդրոնական Դպր. Նոր Ջուղայի	Հայերէն, հայոց պատմութիւն, պարսկերէն	26	728	6	3	722		1896	
4	Անտոնեան օրիորդ Էլիզա	Ն.-Ջ. Ս. Կատ. Օր. Դպր. Ջ. դաս. վկայականով	Ս. բաժ. զուգընթացի բոլոր առարկաները՝ բացի հայերէնից	23	644	1		643	2	1915	
5	Առաքելեան » Հայկանոյշ	Ն.-Ջ. Ս. Կատ. Օր. դպր. Ե. դասարան	Հայերէն, կրօն, իրաղնն, ընթերցանութիւն	25	700	19		681	16	1906	
6	Գալստանեան » Խաթուն	Ն.-Ջ. Ս. Կատ. Օր. դպր. Ե. դասարան	Ձեռագործ և Մանկապարտէզ (օգնականուհի)	23	644	14		630		1915	
7	Դաւթեան » Աշխէն	Ս.գուլիսի երկդ. ծխ. դպր.	Երգ. նկարչութ. հայերէն, հայրենագիտութ.	24	672	14	15	658	12	1910	
8	Դաւթեան » Նուարդ	Ն.-Ջ. Ս. Կատ. Օր. դպր.	Մանկապարտիզի Գ. բաժ. առարկաները	23	644	—		644		1902	
9	Երեմեան պարոն Ա.բամ	Մարզուանի Ս. Սահակեան Նախակրթարանն ու «Իտատի» 8-ամեայ դասընթացքով վարժարանը. (տարիւլ մուալիմէյն Պօլիս 3 տարի	Հայերէն, գր. պատմ, բնապատմ. հայոց պատմ.	29	812	1		811	10	1915	Ուսուցիչների և ուսուցչուհիների բացակայութեանց պատճառը հիւանդութիւն կամ նման բանաւոր արգելք է եղել։
10	Զօհրաբեան օրիորդ Նեկտարինէ	Ն.-Ջ. Ս. Կատ. Օր. Դպր. Ե. դաս.	Հայերէն, թուաբ. իրաղնն. հայոց պատմութ.	26	728	29	2	699	6	1912	
11	Ժամկոչեան տիկ. Սրեւահատ	Թիֆլիսի Ցովն. դպր. Է. դաս. վկայականով	Ձեւագիտութիւն, ուսերէն և բնապատմութ.	24	672	13	1	659		1909	
12	» պարոն Հայկ (Տեսուչ)	» Ներսիս. դպր. Ջ. դաս. վկայականով	Հայերէն (աշ. և գրբ. բանահիւսթ. տեսութ.) և Մանկավարժութիւն	20	660	5	3	555	18	1910	
13	Իսրայէլեան օր. Եղիսաբեթ (կարգապահ Ս. Կատ. դպրոցի).	Կալկաթայի Բաբէրաղ. դպր. Էկստէրն քընուութեան վկայականով	Թուաբանութ. անգլերէն, երկրաչափ. նկարչ. և առտնին տնտեսութիւն	26	728	3		725	6	1912	Դասաւանդութիւնը կատարուած է համաձայն ուսուցիչների լայնածաւալ տրամադրութեան և հաւանութեան, որովհետև՝ դեռ առաջին տարին լինելով՝ ինձ անծանօթ էր նրանց կարողութիւնն ու որ առարկային ինչքան ծանօթ լինելը։
14	Խաչիկեան օրիորդ Լուսաբեր	Ն.-Ջ. Ս. Կատ. Օր. դպր. վկայականով	Բնապատմ. թուաբ. հայերէն, ձեռագործ նկարչ. անգլերէն	27	756	—	7	756		1914	
15	Կարապետեան պարոն Մկրտում (կարգապահ Կենտրոնական դպրոցի)	Կալկաթայի Պետական Եւրոպական դպրոցը	Անգլերէն	26	728	8	1	720		1890	
16	Կիրակոսեան օրիորդ Եղիսաբեթ	Ն.-Ջ. Ս. Կատ. Օր. դպր. Ջ. դաս. վկայականով	Մանկապարտիզի Գ. բաժ. հայերէն և իրաղնն.	23	644	—		644		1913	
17	Հայրապետեան օրիորդ Հեղինէ	Ն.-Ջ. Ս. Կատ. Օր. դպր. Ե. դաս.	Մանկապարտիզի Ա. բաժ. բոլոր առարկաները	23	644	9		635		1914	
18	Ղազարեան օր. Մէրջան	Ն.-Ջ. Ս. Կատ. Օր. դպր. Ջ. դաս. վկայականով	Թուաբանութ. գրութիւն ձեռագործ, երգ. և նկարչութիւն	24	672	5		667	2	1915	
19	Մարտիրոսեան պ. Ղազարոս	Ն.-Ջ. Կենտր դպր. Ջ. դաս. վկայականով	Աշխարհագրութ. ընդհ. պատմութ. բնապատմ.	29	812	—		812	9	1914	
20	Մարտիրոսեան օր. Վիկտորիա	Ն.-Ջ. Ս. Կատ. Օր. դպր. Ջ. դաս. վկայականով	Ս. բաժ. պատրաստականի բոլոր առարկաները	23	644	—	2	644		1915	
21	Մերզա Մահմուտ		Պարսկերէն	21	588	29	9	559		1907	
22	Յարութիւնեան պ. Ա.րմենակ (քարտուղար Մանկավարժական Խորհրդի)	Կարնոյ Սանասար վարժարան	Ֆիզիկա, բնապատմութիւն ընհ. պատմութիւն	26	728	—	3	728	2	1893	
23	Յովհաննիսեան Ա.րժ. Տէր Եսայի քահանայ	Կալկաթայի հայոց Մարդ. Ճեմ. վկայականով	Կրօն և հայոց պատմ.	20	560	8		552		1886	
24	Նուքուբեան պ. Պօղոս (կարգապ. Գ.-Քանանեան դպրոցի)	Կալկաթայի Դէֆտրն կոլէճ.	Անգլերէն	25	700	1		699	5	1886	
25	Վարդանեան Ա.րժ. Վարդան քհնյ. (փոխ. տեսուչ)	Կալկաթայի հայոց Մարդ. Ճեմարան	Անգլերէն և կրօն	25	700	10	1	690	1	1893	
26	Վարդանեան օր. Մէրխաթուն	Ն.-Ջ. Ս. Կատ. Օր. դպր. Ջ. վկայականով	Ս. բաժ. հիմն. բոլոր առարկաները և ընթերց.	25	700	11	7	689	7	1913	
27	Տէր Գրիգորեան պ. Յովհաննէս	Կալկաթայի հայոց Մարդ. Ճեմ. վկայականով	Անգլերէն, հայերէն, նկարչութիւն.	29	812	5		807		1915	
28	Տէր Կիւրեղեան օր. Լուսաբեր	Ն.-Ջ. Ս. Կատ. Օր. դպր. Ե. դաս.	Հայերէն, թուաբանութ. նկարչութ.	26	728	24½		703¾	11	1914	
29	Տէր Նիկողայոսեան օր. Աստղիկ	Ն.-Ջ. Ս. Կատ. Օր. դպր. Ջ. դաս. վկայականով	Ձեռագործ. իրաղնն. հայերէն և ընթերց.	24	672	5		667	6	1914	

Հ. Գ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

1915—1916 ուս. տարում Նոր-Զուղայի Հայոց ազգ. երկս. դպրոցների վերաքննութիւններն սկսուել են Օգոստ. 28-ին, իսկ կանոնաւոր պարապմունքները՝ Սեպտ. 1-ին։

Տարուայ սկզբին Դպրոցներն ու Մանկապարտէզը միասին ունէին 544 աշակերտ-ուհի։ (120-ը Մանկապարտէզում՝ 424-ը դպրոցներում)։ Սեպտեմբերին կաթոլիկաց և բողոքականաց դպրոցներից Ազգ. երկս. դպրոցներիս Վարչութեան դիմեցին և ընդունուեցին 85 հոգի, բոլորն էլ քընուութեամբ։ Այդպիսով առ մէկն Յունվարի 1915 թուի՝ աշակերտ-ուհիների ընդհանուր թիւն էր 629։

Յունվարից ընդունուեցին 23 հոգի, որով երկրորդ կիսամեակում ունեցանք 652 հոգի։ Տարուայ ընթացքում զանազան պատճառներով դպրոցից դուրս են եկել 14 հոգի, որ չի մտնում այդ ընդհանուր թուի մէջ և արտաքսուել են 4 հոգի։ Այնպէս որ ուսումնական տարուայ վերջը դպրոցներում կար 618 աշակերտ-ուհի։

Ուսումնական տարուայ ընթացքում կանոնաւոր պարապմունքներ ունեցել ենք 200 օր։

Իւրաքանչիւր երեք ամիսը մի անգամ ունեցել ենք ստուգիչ գրաւորներ՝ աշակերտների անցածը մաս մաս կրկնել տալու և գրաւոր աշխատանքներին օժանդակելու նպատակներով։

Ազգ. երկս. դպրոցներն 1915—1916 ուս. տարում ունէին՝ 3 բաժանմունք՝ իրանց զուգընթացներով ու հիմնականներով, 6 դասարան տղայոց, որոնցից Ա. դասարանն ունի զուգ. և հիմն. (զուգընթացն ու պատրաստականը երկուսեռ), 5 դասարան էլ օրիորդաց դպրոցում կար (Բ. Գ. Դ. Ե. Զ.)։ Իսկ Մանկապարտիզում ունէինք 2 առաջին 1 երկրորդ և 1 երրորդ բաժանմունքներ։

Դրանք դասարաններում տեղաւորուած էին հետևեալ կերպով։

Կենդրօնական Դպրոց

Բ.	բաժ.	հիմն.	31	աշակերտ	բոլորն էլ	տղայ
Գ.	»	»	27	»	»	»
Բ.	դասարան		23	»	»	»
Գ.	»		16	»	»	»
Դ.	»		8	»	»	»
Ե.	»		8	»	»	»
Զ.	»		5	»	»	»

Ս. Կատարինեան Օր. դպրոց

Ա.	բաժ.	հիմն.	23	հոգի, որոնցից	18-ը	աղջիկներ
Ա.	»	զուգ.	31	» »	17-ը	»
Ա.	»	պատր.	31	» »	15-ը	»
Բ.	դասարան		29	»	բոլորն էլ	աղջիկներ
Գ.	»		13	»	»	»
Դ.	»		15	»	»	»
Ե.	»		11	»	»	»
Զ.	»		3	»	»	»

Գ.-Քանանեան Դպրոց

Բ.	բաժ.	պատրաստ.	38	աշ.	բոլորն էլ	աղջկներ
Բ.	»	զուգընթաց	38	»	13-ը տղայ,	25-ը աղջիկ.
Գ.	»	պատրաստ.	27	»	բոլորն էլ	աղջկներ
Գ.	»	զուգընթաց	31	»	13-ը տղայ,	18-ը աղջիկ.
Ա.	դաս.	պատրաստ.	30	»	12-ը »	18-ը »
Ա.	»	զուգընթաց	29	»	բոլորն էլ	աղջկներ։

Գ.-Քանանեան Մանկապարտէզ.

Գ.	բաժան.		43	աշ.	21-ը տղայ,	22-ը աղջիկ.
Բ.	»		34	»	19-ը »	15-ը »
Ա.	»	հիմն.	35	»	21-ը »	14-ը »
Ա.	»	զուգ.	32	»	17-ը »	15-ը »

Ուրեմն դպրոցներս ունին 9 բաժանմունք և 13 դասարան։ Ընդամենը 648 աշակերտ-ուհի, որոնցից 303-ը տղայ, 345-ը աղջիկ։ Միայն Մանկապարտիզում կայ 155։

Աշակերտների ընտանեկան եւ անհատական դրութիւններն արտայայտում են հետեւեալ կերպով.

	հանի՛ն են բոլոր ազգակցաւոր	հանի՛նք ունի ձրի	հանի՛նք հնարաւորութիւն ունին տանը դաս պարապելու	հանի՛նք ոչ
Կենտրօնական դպրոց				
Զ. դասարան	2	3	2	3
Ե. »	6	2	4	4
Դ. »	6	2	6	2
Գ. »	10	6	11	5
Ս. Կաս. Օր. դպրոց				
Զ. դասարան	2	1	2	1
Ե. »	5	6	8	3
Դ. »	6	9	8	7
Գ. »	6	7	6	7
Բ. »	21	8	26	3
Գ.-Քանանեան դպրոց				
Բ. դասարան	15	8	14	9
Ա. » հիմն.	12	14	16	10
Ա. » զուգ.	13	16	18	11
Ա. » պատր.	15	15	12	18
Գ. բաժանմունք հիմն.	11	16	12	15
Գ. » զուգ.	17	14	13	18
Գ. » պատր.	17	10	19	8
Բ. » հիմն.	14	17	16	15
Բ. » զուգ.	14	24	19	19
Բ. » պատր.	18	20	23	17
Ա. » հիմն.	15	18	18	15
Ա. » զուգ.	11	20	24	7
Ա. » պատր.	21	10	18	13
Մանկապարտէզ.				
Գ. բաժանմունք	24	19	—	—
Բ. »	22	12	—	—
Ա. »	35	33	—	—
Ընդամենը	338	310	380	268

Սրանից երևում է որ աշակերտութեան մեծ մասը հընարաւորութիւն ունի տանը դաս պատրաստելու և աշխատելու, բայց և այնպէս չ,սովորողների թիւը դպրոցում աւելի շատ է։ Դրա պատճառը գլխաւորապէս նրանց ծուլութիւնը, անպարտաճանաչութիւնն ու ընտանեկան պայմաններն են։ Դրանց միանում է նաև այն հանգամանքը, որ շատերը չքաւորութեան պատճառաւ չեն կարող դպրոցական պահանջներին բաւարարութիւն տալ։ Սենդի պակասութեան պատճառաւ սակաւարիւնների թիւը բաւական շատ է. դրանից առաջ են գալիս շատ տեսակ հիւանդութիւններ, նաև թուլամբտութիւն ու անկարողութիւն։ Բժշկական թեթև քննութիւնները ցոյց տուին, որ վարակիչ վտանգաւոր հիւանդութիւններ չկան։ Բայց հազիւ թէ այդ ճիշտ լինի. մօտ 700 աշակերտ-աշակերտուհի եղած տեղում դրժուար է հաւատալ, որ ոչ մի վարակիչ հիւանդութիւն չկայ. այդ ասելով, ի հարկէ, չեմ ուզում ասել որ բժիշկը չի կարողացել քննել կամ անբարեխիղճ է եղել. այլ այն՝ որ աշակերտների բժշկական իսկական քննութիւնը հասարակութեան կողմից յանձին Հոգաբարձութեան սահմանափակում է, որ չեղածի է հաւասար։ Բայց դպրոցները գաղտնի վտանգաւոր հիւանդութիւններից միանգամայն զերծ պահելու համար բժշկական քննութիւնը պիտի դնել լուրջ հիմունքների վրայ։ Չէ՞ որ յաճախ առողջ ու ընդունակ ծնուած երեխաները իզուր զոհ են գնում այդպիսի զանցառութեանց։

1915—1916-ին Դպրոցում աւանդւում էին հետևեալ առարկաները։

		Բաժանմունքներ Ա.	Բ.	Գ.	Դասարաններ Ա.	Բ.	Գ.	Դ.	Ե.	Զ.
1.	Կրօն	2	2	2	2	2	2	—	—	—
2.	Եկեղեցական պատմութիւն	—	—	—	—	—	—	2	2	—
3.	Կրօնների պատմութիւն	—	—	—	—	—	—	—	—	1
4.	Հայոց լեզու հին	—	—	—	—	—	—	—	1	1
5.	Հայոց լեզու նոր	6	6	6	6	4	4	4	4	4
6.	Հայոց պատմութիւն	.	—	—	2	2	2	2	2	—
7.	Անգլերէն	—	4	4	5	5	4	4	4	4
8.	Պարսկերէն	—	—	3	3	3	3	3	3	3
9.	Ռուսերէն	—	—	—	—	—	4	3	3	3
10.	Ընդհանուր պատմութիւն	—	—	—	—	—	2	2	2	2
11.	Մանկավարժութիւն	—	—	—	—	—	—	—	—	1
12.	Բանահիւսութեան տեսութիւն	—	—	—	—	—	—	—	1	1
13.	Գրականութեան պատմութիւն	—	—	—	—	—	—	—	2	2
14.	Իրաւունութիւն	2	2	2	—	—	—	—	—	—
15.	Բնագիտութիւն	—	—	—	3	3	3	—	—	—
16.	Բնախօսութիւն	—	—	—	—		—	3	—	—
17.	Հայրենագիտութիւն	—	—	2	—	—	—	—	—	—
18.	Աշխարհագրութիւն	—	—	—	2	2	2	2	—	—
19.	Թուաբանութիւն	5	5	5	5	5	3	2	2	1
20.	Էլգեբրա	—	—	—	—	—	—	2	2	2
21.	Երկրաչափութիւն	—	—	—	—	—	—	2	2	2
22.	Ֆիզիկա	—	-	—	—	—	—	—	3	3
23.	Վայելչագրութիւն	2	1	1	—	—	—	—	—	—
24.	Նկարչութիւն	2	2	2	2	—	—	—	—	—
25.	Ձեռագործ և ձեռագիտութիւն	2	2	2	2	2	2	2	2	2
26.	Երգ և եւրոպական ձայնագրութ.	2	2	2	2	2	2	2	—	—

Վերոգրեալ առարկաներից Մանկավարժութիւնը, կրօնների պատմութիւնը, բնախօսութիւնն ու Հայոց քննական պատմութիւնը այս տարի նոր են աւելացել։

Ծանօթ.— Մանկավարժութիւնը երկու տարի առաջ եղել է, իսկ կրօնների պատմութիւնը մեզանից անկախ պատճառներով այս տարի չ'աւանդուեց։

Դասաժամերի թիւը այս տարի 50-ով աւելացել է, մեծ մասամբ հայերէնի ժամերը։ Դասաժամերի աւելանալուն հետ

աւելացել են նաև ուսուցիչները։ Իսկ երկու ուսուցիչ հրաւիրուած են բացառապէս կաթոլիկաց և բողոքականաց դպրոցներից եկած աշակերտների համար։

Մի բան որ շատ աչքի է ընկնում Զուղայի դպրոցներում, դա այն է, որ հայոց լեզուի մէջ շատ ետ են աշակերտները. բարձր դասարաններում նոյնիսկ պարզ ու կոկիկ կարդալ չեն կարողանում։ Հայերէնը պէտք է դպրոցներում գերակշռող դեր ու նշանակութիւն ունենայ, որովհետև աւանդւող բոլոր առարկաների համար հայոց լեզուն ծառայում է որպէս հիմք, հետևապէս, քանի որ հայոց լեզուից թոյլ աշակերտների տոկոսը 60—75 ի հասնում, էլ ո՞րտեղից կարելի է յուսալ թէ աշկերտների յառաջադիմութիւնը ընդհանրապէս կարող է զգալի չափով բարձրանալ։ Ամբողջ 9 տարի հայերէն սովորելուց յետոյ՝ աշակերտը դուրս է գալիս դպրոցից՝ առանց կարգին հայերէն իմանալու։ Համեմատաբար պարսկերէն ու անգլերէն աւելի լաւ գիտեն քան հայերէն։

Ինչպէս հայերէն նոյնպէս և միւս առարկաների մէջ ետ լինելու գլխաւոր պատճառն այն է՝ որ ստորին բաժանմունքներն ու դասարաններն յանձնւում են միանգամայն խամ, մանկավարժական հարկաւոր տեղեկութիւններից զուրկ դասատուների ձեռքը. սա շատ սխալ է։ Որովհետև իսկական ուսուցչական հմտութիւն պահանջւում է հէնց այդ ստորին բաժանմունքներում ու դասարաններում։ Մանկան հոգին նորաբողբոջ մատաղ ծլի է նման. եթէ սկզբից նրան դրիք բարեյաջող պայմանների մէջ և հմուտ ձեռքի տակ, այն ժամանակ միայն նա կարող է ուղիղ աճել ու բարձրանալ. ծռուելուց յետոյ ուղղելը վերին աստիճանի դժուար է և մի քանի անգամ աւելի ժամանակ է պահանջում որ ուղղուի, այն էլ շատ անգամ վնասւում է։

Սրանով ուզում եմ ասել որ դպրոցների յառաջադիմութիւնն ու յաջողութիւնը կախուած է ստորին դասարաններից ու բաժանմունքներից. եթէ այնտեղ աշակերտի

մտաւոր կարողութիւնները նպատակայարմար կերպով մարզւում են, բարձր դասարաններում նա կը կարողանայ մտաւոր պաշար հաւաքել և օգտուել ուսուցչի բացադրութիւնից, եթէ ոչ՝ շատ քիչ բան կը իւրացնի աշակերտը և կը տուժի նոյնիսկ իր բնական ընդունակութիւններից։

Այն կանոնները, որ սահմանւում են դպրոցում մանկավարժական ժողովի կողմից, անկասկած նպատակ ունին աշակերտների յառաջադիմութեանը նպաստելու, նրանց դատարակութիւնը բարելաւելու և այլն. ինկատի ունենալով այդ իրողութիւնը՝ յարգելի ծնողների վրայ էլ պարտք է ընկնում հոգ տանել և նախանձախնդիր լինել այդ կանոնների գործադրութեանը և ոչ թէ հակառակել։ Տխուր և վնասակար երևոյթ է, երբ ծնողները նստում ու դպրոց եկող իրանց երեխայի մօտ տեղի անտեղի քննադատում են դպրոցի կարգերն ու ուսուցիչներին։ Այդպիսի ծնողների երեխաները դպրոցներում աչքի են ընկնում՝ որպէս անհնազանդ, ինքնահաւան ու երես առած։ Շատ անգամ, երբ տեսնում ենք ոչ մի խըրատ, ուղղիչ միջոց ազդեցութիւն չի անում, ընդհակառակը իր մօտի աշակերտներին էլ փչացնում է, ստիպուած ենք լինում այդպիսի աշակերտին դուրս անել՝ դպրոցը փրկելու համար։ Արտաքսելու դէպքեր տեղի են ունենում նաև ուրիշ ծանր յանցանքների դէպքում։

Բացի դրանից, ծնողները յաճախ հասարակ պատճառներով աշկերտին ետ են պահում դպրոցից կամ ուշացնում։ Շատ անգամ էլ մի տետրակի կամ մի մատիտի համար ուսուցչին ստիպում են աշակերտին տուն ուղարկել՝ բերել տալու համար (այդ միջոցին դիմում են երբ որ, հակառակ պատուէրին, երեխան էլի գալիս նստում է առանց տետրակի, թանաքի և այլն)։

Սրանք, ըստ երևոյթին փոքր բաներ են, բայց դպրոցի յաջողութեան կարևոր մասն էլ դրանցից է կախուած, ծնողները չ՚պիտի համաձայնուեն անել այդպիսի բաներ։ Շատ սխալ է նաև այն՝ երբ երեխային դպրոց ուղարկելուց

յետոյ ամեն ինչ՝ բնաւորութեան կրթութեան վերաբերեալ՝ ուսուցչից են սպասում. այդ տեսակէտից աւելի մեծ պարտքը ընկնում է ծնողների վրայ։ Քանի որ յաճախ դպրոցում շինածն էլ տանը քանդում են։

Առարկաներից մի քանիսը, ինչպէս իրաւունութիւն, հայրենագիտութիւն, երկրաչափական ձևագիտութիւն, Մանկավարժական ժողովը դուրս գցեց ծրագրից, որովհետև նպատակին ծառայելուց շատ հեռու էին։

Մանկապարտիզում աւանդւում են հետևեալ առարկաները.

1. հիւսուածք, 2. խաղալիկներ, 3. երգ, 4. արտասանութիւն, 5. աշխատանք մոմից և կաւից, 6. ճիպոտների դասաւորութիւն (զանազան ձևեր), 7. աշխատանք աւազի վրայ, 8. յուլունք, 9. պատմութիւն, 10. ֆրէօպէլի պարգևներ, 11. գծագրութիւն, 12. թուղթ ծալել, 13 հայրենագիտութիւն, 14. ձեռագործ, 15. ֆիգուրներ թղթից, 16. տրաֆօրատ, 17. գունաւոր թղթեր դասաւորել, 18. լոգո։

Բացի դրանցից, Մանկավարժական ժողովում ընդունուեց Մանկապարտիզում. մտցնել հայերէնի և թուաբանութեան նախատարերքի մի մասը՝ որպէս կենտրոնական առարկաներ։ Զանազան խաղերի և ձևերի միջոցաւ անզգալապէս երեխան պիտի սովորի 10-ի շրջանում չորս գործողութիւնները և ճանաչի բոլոր տառերը։ Այդպիսով առաջին բաժանմունքի դասատուն մասամբ թեթևացած կը լինի տառերը սովրեցնելու և թուաբանութեան սկզբնական աշխատանքից և միևնոյն ժամանակ դասարաններն առաջ են ընկնում։

Այս բոլորից երևում է, որ Դպրոցներն ու Մանկապարտէզը իրանց ցանկալի բարձրութեան վրայ լինելուց շատ հեռու են դեռ։

Գրադարան.—Դպրոցների յաջողութեան զօրաւոր խթաններից մէկն էլ գրադարանն է։ Աշակերտն ընթերցանութեան միջոցաւ պիտի արգասաւորէ դպրոցից ստացած

մտապաշարը և ընդլայնէ մտաւոր հորիզոնը։ Դրա համար անհրաժեշտէ, որ դպրոցները ունենային մի ճոխ գրադարան։ Եղածը միանգամայն անբաւարար է 6—700 աշակերտութիւն ունեցող այսպիսի դպրոցների համար։

Դպրոցներում ընթերցանութեան գործը բարեկարգելու և կանոնաւոր հիմքերի վրայ դնելու նպատակաւ Մանկավարժական ժողովը որոշեց մի կոչով դիմել հայ հասարակութեան՝ Զուղայում և այլուր, գրադարանը ճոխացնելու համար. այդ կոչն ուղարկուած է Հոգաբարձութեան ի հաստատութիւն։ Գուցէ կը գտնուին բարեգործներ, իրանց անունը այդ ձևով կը կապեն դպրոցի ու գրադարանի հետ։

Ուրախութեամբ արձանագրում ենք, որ Մեծարելի Հոգաբարձութիւնը այս տարուանից որոշել է տարեկան 50 թուման յատկացնել գրադարանի համար գրքեր առնելու։ Բայց 50 թումանը, որից աւել դպրոցների բիւդճէն չի ներում տալ, շատ քիչ է այդ մեծ կարիքի դիմաց, մնում է բարերարներից սպասել այդ պակասը լրացնելը։

Ներկայումս գրադարանում կայ 872 կտոր գիրք, որոնցից 227-ը արդէն միանգամայն մաշուած գործածութիւնից դուրս ընկած են համարւում. մնում է 645 կտոր։ Դրանցից էլ համարեա կէսը ըրօշիւրներ են և իւրաքանչիւրը միևնոյն աշակերտի կողմից մի քանի անգամ կարդացուած։ Մի անկէտայից երևաց, որ Զուղայի դպրոցներում ամենից շատ կարդացուող հայ հեղինակներն են՝ Րաֆֆի, Ա.Հարոնեան, Շիրվանզադէ, Պռոշեան, Ա.դայեան, Ատրպետ, Յ. Թումանեան։

Օտար հեղինակներ համարեա չեն կարդացւում. չեն կարդացւում նոյնպէս գիտական երկասիրութիւններ։ Այնպէս որ շատ միակողմանի և աննպատակայարմար է այդ տեսակի ընթերցանութիւնը։ Ընդհանրապէս շատ քիչ են կարդում. միջին թուով իրաքանչիւր աշակերտ կարդում է 7 գիրք տարեկան։ Միւս կարդացած գրքերի մեծ մասը փոքրիկ աննշան բաներ են, մի մասն էլ միանգամայն անպէտք։

Մի ճոխ գրադարանի շնորհիւ միայն կարելի կը լինի ազատուել այս չարիքներից։

Այս տարուանից սկսած դպրոցն ստանում է «Աղբիւր-տարազ» և «Հասկեր» մանկական թերթերը։

Աշակերտների վարքը ու բացակայութիւնն.—Ն.-Ջուղայի դպրոցների աշակերտութեան մասին խօսելիս չի կարելի չշեշտել այն երևոյթը, որ նրանց մէջ, մանաւանդ Բ. Գ. դասարաններից վեր, խիստ կերպով աչքի են ընկնում մեծամտութիւնը. անհնազանդութիւնն ու մանաւանդ երես առածութիւնը։ Այդ տխուր հանգամանքների շնորհիւ անուղղանները զրկւում են դպրոցից և շատերն էլ նկատողութիւն են ստանում վարքից։

Բացակայութիւններ.—Միջին թուով իւրաքանչիւր աշակերտ, ամբողջ ուս. տարուայ ընթացքում բացակայել է 34 անգամ։ Չ'նայելով՝ որ նախկին տարիների հետ համեմատած բացակայութիւնների այդ թիւը բաւական փոքրացել է, բայց, յամենայն դէպս, երբէք ներելի չէ որ մի աշակերտ, եթէ պատճառը բանաւոր չէ եղել, բացակայի 34 ժամ։

Օժանդակութիւն չքաւոր աշակերտներին.—Ինչպէս ամեն տարի, այս տարի էլ չքաւոր աշակերտների մի մասը, ըստ հնարաւորութեան, դասական պիտոյքներով և շորով նպաստ է ստացել Աղքատախնամ ընկերութիւնից և Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնից։

Պարապմունքներ դասերից դուրս.—Քաղաքական անպաստ հանգամանքների պատճառաւ այս տարի դպրոցական-աշակերտական հանդէսներ տեղի չեն ունեցել՝ եթէ չը-հաշուենք Նոր-տարուայ փոքրիկ ցերեկոյթը։

Բարձր դասարանների աշակերտներն ունեցել են 5—6 հաւաքոյթ՝ տեսչի ղեկավարութեամբ։ Այնտեղ կարդացուել, բացատրուել ու յետոյ մտքերի փոխանակութեան նիւթ են ծառայել ընդհանուր զարգացման նպաստող խնդիրներ։ Իսկ պ. Ստ. Աբգարեանը Չ. դասարանի տղայոց հետ պարապել է սղագրութիւն։

Փորձնական դասեր.— Հայոց լեզուից և Թուաբանութիւնից ու Աշխարհագրութիւնից եղել են մի քանի փորձնական դասեր և նրանց վերաբերեալ զրոյցներ։

Պատշաճական կարգեր.—Դպրոցներիս ուսուցչական խումբը՝ աշակերտութեան հետ միասին յարգել է Դպրոցներիս բարերարներ՝ Գ. Քանանեանի, Մ. Յորդանանեանի և Աբգարեանցի անմահ յիշատակները՝ պարապմունքները դադարեցնելով և նրանց յիշատակին մատուցուող Ս. պատարագին ներկայ լինելով։

Դպրոցներիս երգեցիկ խումբը Կիւրակի և տօն օրերին երգել է Վանքի մայր տաճարում և ուրիշ եկեղեցիներում՝ ղեկավարութեամբ պ, Ղազարոս Մարտիրոսեանի։

Իսկ գործնական Երաժշտութիւնը նուագել է հանդէսների և ներկայացման ժամանակ՝ ղեկավարութեամբ պ. Մկրտում Կարապետեանի, որ շնորհիւ իւր թափած ջանքերի և ինքնաշխատութեամբ ձեռք բերած այդքան երաժշտական պաշարի, միանգամայն արժանի է գնահատութեան և շնորհակալութեան։

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՆԸ

Բաժանմունքներ և Դասարաններ		Աշակերտների թիւը	Փոխադրուում են	Մնում են	Արձակուում են
Ա. բաժ.	հիմնական	33	25	8	
	զուգնթաց	31	22	9	
	պատրաստ.	31	23	8	
Բ. բաժ.	հիմնական	31	25	6	
	զուգնթաց	38	23	15	
	պատրաստ.	38	22	16	
Գ. բաժ.	հիմնական	26	15	11	
	զուգնթաց	31	18	13	
	պատրաստ.	27	18	9	

Բաժանմունքներ և Դասարաններ		Աշակերտների թիւը	Փոխադրուում են	Մնում են	Արձակուում են
Ա. դասարան	հիմնական	26	19	7	
	զուգնթաց	29	14	15	
	պատրաստ.	30	6	24	
Բ. դասարան	տղայոց	23	17	6	
	օրիորդաց	29	16	13	
Գ. դասարան	տղայոց	16	9	7	
	օրիորդաց	13	9	4	
Դ. դասարան	տղայոց	8	5	3	
	օրիորդաց	15	8	7	
Ե. դասարան	տղայոց	8	5	3	
	օրիորդաց	11	10	1	

Վերևի ցուցակից երևում է, որ դպրոցների 493 աշակերտութիւնից փոխադրուում են 309-ը կամ 62,6% մնում են՝ 184-ը կամ 37,3% արձակուում 4-ը կամ 0,8%:

Ինչպէս տեսնում էք՝ մնացողների թիւը բաւական մեծ տոկոս է կազմում: Դրա պատճառներն են՝ նախ ծրագրի անորոշութիւնը, ուր առարկաների ծաւալը խիստ անհամապատասխան է և աւելի շուտ կախուած է ուսուցչի անհատական հայեացքից: Ծրագիրը պիտի լինի երկարամեայ փորձերի արդիւնք: Մանկավարժական ժողովը ծրագիրը կազմելիս ազատ օգտուելով Կովկասեան դպրոցների ծրագրից՝ ընկել է սխալանքի մէջ, որովհետև նրանց դպրոցական-տնտեսական պայմանները շատ տարբեր են տեղիս դպրոցների պայմաններից: Մանաւանդ այստեղ անգլերէնն ու պարսկերէնը աւելի մեծ ծաւալ ունին և խլում են միւս ժամերը:

Պատճառներից մէկն է նաև այն, որ մեր աշակերտութիւնը հազիւ ծխական դպրոցի կուրս անցնելու հնարաւորութիւն ունի՝ շնորհիւ նրան շրջապատող աննպաստ պայմանների, այն է՝ առաօրեայ հոգսերը, անբաւարար սնունդը, տանը պարապելու յարմարութիւնից զուրկ լինելը, կարգին զգեստ ու դասական պիտոյքներ չունենալը: Այն ինչ՝ մի որ է և լուրջ ծրագրային դասընթացք լրիւ անցնելու համար աշակերտութիւնը միանգամայն ազատ պիտի լինի այդ բոլորից: Ընդհակառակը դրսի աննպաստ պայմանները, դրանց հետ միասին, թոյլ չեն տալիս աշակերտին կենտրոնանալու և ամփոփուելու իր դասի շուրջը:

Այս և նման աննպաստ պայմանները վերացնելու համար պէտք եղած ջանքերն ու միջոցները չ՚պիտի խնայեն դպրոցն ու հոգաբարձութիւնը: Այն ժամանակ միայն հնարաւոր կը լինի կարգին արդիւնք ստանալ դպրոցներից:

Տարուայ սկզբում ուսուցչական կազմից հեռացել են երկուսը. մէկն Տէր Համբարձումը, որ Խորհրդարանի որոշմամբ գնացել է Ռաշտ որպէս վիճակաւոր, միւսը պ. Արամ Յովսէփեանը, որ մի կարճ ժամանակ պաշտօնավարելուց յետոյ թողել է դպրոցը:

Հաշուետուութեան տարում լրացաւ դպրոցներումս պաշտօնավարող երկարամեայ ուսուցիչ արժանապատիւ Տէր Եսայի քահանայ Յովհաննիսեանի 25-ամեայ ուսուցչական գործունէութեան շրջանը: Նա դպրոցը թողեց Խորհրդարանի և վանական այլ չափազանց շատ գործերով զբաղուած լինելու միանգամայն արդար ու անմերժելի պատճառաբանութեամբ: Բայց ի հարկէ այդքանով չ՚պիտի վերջանայ խնդիրը, դպրոցը պարտաւոր է այդպիսի մի մաքուր, բարեխիղճ ու արժանաւոր վաստակաւորի գնահատել ըստ արժանոյն՝ կատարելով նրա 25-ամեայ գործունէութեան յօբելեանը՝ ասելու համար նրան միանգամայն արժանի յարգանքի և շնորհակալութեան խօսքը: Անկասկած հասարակութիւնն էլ անտարբեր չի մնայ այդպիսի մի սրբազան պարտականութեան հանդէպ:

Ուսուցիչներից 3-ը, օր. օր. Վիկտորիա Մարտիրոսեան, Էլիզա Անտոնեան և Խաթունիկ Գալստանեան՝ տարուայ սկզբին ցանկութիւն յայտնեցին ձրի պաշտօնավարելու դպրոցներումս և բարեխղճութեամբ տարան իրանց ստանձնած պարտականութիւնները, որի համար յայտնում ենք անկեղծ շնորհակալութիւն։

Խօսք չկայ որ դպրոցների յառաջադիմութիւնն անցնում է գլխաւորապէս ուսուցչից։ Բայց որպէսզի դպրոցներիս պարապմունքները ցանկալի կերպով արդիւնք տան, բաւական չէ ունենալ նոյնիսկ մասնագէտ ուսուցիչներ, այլ նրանք տոգորուած պիտի լինին նաև գաղափարական գործունէութեան մաքուր զգացմունքներով, սէր դէպի դպրոցը, անձնուէր գործունէութիւն դէպի ստանձնած պարտականութիւնը։ Ահա այսպիսի մարդկանցից կազմուած ուսուցչական խումբը կարող է հիանալի արդիւնքի հասնել՝ նոյնիսկ Զուղայի պէս աննպաստ պայմաններով շրջապատուած մի տեղում։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ.—

Ուսումնական տարուայ ընթացքում Մանկավարժական խուրհուրդն ունեցել է 26 նիստ։

Նիստերից բացակայել են.

1 անգամ՝ պ. Արմենակ Յարութիւնեան, պ. Ստեփան Աբգարեան, պ. Յ. Տէր Գրիգորեան, պ. Պօղոս Նուքուրեան, պ. Տ. Աբգարեան, օր. Մէրջան Ղազարեան, օր. Նեկտարինէ Զօհրաբեան, օր. Հայկանուշ Առաքելեան, օր. Նուարդ Դաւթեան, օր. Լ. Տէր Կիւրեղեան, օր. Վիկտորիա Մարտիրոսեան։

2 անգամ՝ օր. Եղիսաբէթ Իսրայէլեան, պ. Արամ Երեմիան։

3 անգամ՝ օր. Աշխէն Դաւթեան, տիկին Արևահատ Ժամկոչեան, պ. Մկրտում Կարապետեան։

4 անգամ՝ օր. Մէրխաթուն Վարդանեան։

6 անգամ՝ Տէր Վարդան քահանայ Վարդանեան։
8 » Տէր Եսայի » Յովհաննեսեան։

Մնացածները բոլոր նիստերին էլ ներկայ են եղել։

Մանկավարժական ժողովների զբաղմունքի առարկաներն եղել են՝

1 Զանազան վարչական, մանկավարժական և աշակերտական հարցերի քննութիւններ։
2 Եռամսեակների, յառաջադիմութեան խնդիրներն ու փոխադրութեանց հարցը։
3 Աշակերտների ընթերցանութեան հարցը։
4 » կարգապահութեան »
5 Ծրագրի վերամշակութեան հարցը։
6 Աւարտող աշակերտների քննութեան և վկայականների խնդիրը։
7 Ակտի խնդիրը։
8 Թուանշանների հարցը։
9 Դասագրքերի ընտրութիւն և այլն և այլն։

ՅՈՒՅԱԿ 1915—1916 ՈՒՍ. ՏԱՐԵՇՐՋԱՆՈՒՄ ԸՆԹԱՑԱՒԱՐՏ ԱՇԱԿԵՐՏ—ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ

1 Անտոնեան Շուշանիկ
2 Ասլանեան Գրիգոր
3 Աստուածատրեան Ալէքսի
4 Բուդաղեան Մարտիրոս
5 Գաբրիէլեան Լևոն
6 Թումիկեան Արմենուհի
7 Կարապետեան Թագուհի
8 Յովհաննեսեան Յովհաննէս

Լիայոյս լինելով, որ Մեծարելի Հոգաբարձութիւնը, ինչպէս այս տարի, նոյնպէս և յառաջիկայում չի խնայի իր ջանքերը ըստ հնարաւորութեան բարձրացնելու համար դպրոցների մակարդակը՝ առայժմ այսքանով վերջացնում ենք մեր ասելիքը։

Տեսուչ Նոր-Զուղայի հայոց ազգ.
երկս. դպրոցների՝ Հ. Գ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

1916. Յունիս 19.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ, ԳԷՈՐԳ ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ Ա.ԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ, 1915—1916 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐՈՒԱՑ

Հոգաբարձութիւնս 1915 թ. Օգոստոսի 26-ից ստանձնելով իր պաշտօնն, ամբողջ տարեշրջանում կանոնաւոր կերպով ունեցել է հերթական ժողովներ, ընդ ամենը՝ 46 նիստ, նուիրուած ուսուցչական կազմի լրացման, դասարանների և դասարանական իրերի աւելացման, դրամական նորանոր աղբիւրներ գտնելու, կալուածքների կառավարութեան և զանազան առօրեայ և ընթացիկ խնդիրների։

ԲԻՒՏՃԷ

Ա.զգ. երկսեռ դպրոցները սոյն տարեշրջանում ունեցել են ընդամենը 87,848 ղ. 40 ս. մուտք և 87,801 ղ. 55 ս. ելք։ Թէև այս տարի կալուածքների բերքերը համեմատաբար պակաս գնով վաճառուեցին և ռոճիկների վրայ ևս որոշ աւելացումներ եղան, այնուամենայնիւ, ուսուցիչ-վարժուհիների ռոճիկները կանոնաւոր վճարելուց յետոյ, մնացել է միայն 27,250 ղուան պարտք, որի հանդէպ կայ չվաճառուած ցորեն, Բատաւիայից ստացուելիք գումարը և Եկեղեցեաց ու Հոգևոր Դպրանոցի նպաստները։

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴ

Հակառակ Հոգաբարձութեանս բոլոր ջանքերին և մեր հնդկահայ հայրենակիցների հետ ունեցած երեք տարուայ անընդհատ բանակցութիւններին, Կալկաթայից Մեծապ. պ. Պետրոս Հ. Կրէտեանը յայտնել է թէ, ցաւում է, որ իր աշխատանքը զուր անցաւ և իր առաջարկութիւնն արձագանք չը գտաւ, այնպէս որ դպրոցական Ֆօնդի ամբողջ եկամուտն առայժմ յատկացրուել է այնտեղի Մարդասիրական ճեմարանին, եթէ կառավարիչներին յաջողուի նոյն դպրոցի ուսման մակարդակը բարձր աստիճանի հասցնելու։ Ի վերջոյ աւելացրել է, որ թէև յիշեալ ֆօնդի նպաստողները գրեթէ բոլորն էլ Զուղայեցի էին, սակայն իրեն օգնական չեղան Նոր-Զուղայի ազգ. դպրոցներին ևս որոշ բաժին յատկացնելու։

Մեծ. պ. Աւետում Տէր Պ. Յակոբեանն ևս Լոնդոնից 28 Յունիսի գրութեամբ գրել է, թէ Կալկաթայում դպրոցական նոր շէնք կառուցանելը չը յաջողուելով, ինքն առաջադրել է հաստատել ազգ. ուսումնական մի ֆօնդ և նոյն ֆօնդին նպաստողներից կազմել մի կոմիտէ, որի պարտականութիւնը լինի տարեկան եկամտի որոշ մասը կանոնաւոր կերպով ուղարկել մեր ազգ. երկսեռ դպրոցներին։

Հոգաբարձութիւնս սպասում է վերջնական կարգադրութեան։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԹՈՇԱԿ

Ի նկատի ունենալով մի կողմից բերքերի անհամեմատ արժանացումը և միւս կողմից աշակերտ-աշակերտուհիների աւելանալուց առաջացած նորանոր ծախքերը, Հոգաբարձութիւնս դպրոցական թոշակը այս տարի քիչ աւելացնելով՝ չորս կարգի դարձրեց (ծնողների նիւթական միջոցների համաձայն), այն է՝ ամսական 3, 2, 1 և $^1/_2$-ական ղուան, որից գոյացաւ ընդամենը 4,139 ղուան։

ՆՊԱՍՏ

պ. Թադդէոս Խ. Աբգարեանից, Կեդրոնական դպրոցի և իր տան միջև ընկած ընկերովի պատի վրայ շինութիւն դնելու պատճառով ստացուած . . . 900 ղ.

պ. Մարտիրոս Ս. Եսայեանից, Երեխաների թոշակների հաշուին՝ շնորհակալութեամբ ստացուած 500 ղ.

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Օգոստոսի վերջերին տեղս հասաւ պ. Հայկ Ժամկոչեանն որպէս տեսուչ մեր ազգ. երկսեռ դպրոցների։ Անգլիերէն լեզուի հսկողութեան համար եւս փոխ-տեսուչ նշանակուեց Արժ. Տէր-Վարդան քահ. Վարդանեանն։ Սոյն տարուայ ուսուցչական խումբը բաղկացած էր 29 հոգուց 13 ուսուցիչ և 16 վարժուհի։

Տեղիս Կաթոլիկաց երկսեռ դպրոցները փակուելու պատճառով, մեծ թիւով աշակերտ-աշակերտուհիներ աւելացան մեր դպրոցներում և Հոգաբարձութիւնս ստիպուած եղաւ նոր դասարաններ աւելացնել, նոր նստարաններ պատրաստել և նոր դասատուներ հրաւիրել։

ՆՈՐ ԿԱԼՈՒԱԾՔ

Ազգ. Կեդրոնական դպրոցին կից աւերակ գետնից Հոգաբարձութիւնս 330 դաղաչափ վաճառեց պ. Թադդէոս Խ. Աբգարեանին 9,000 ղուռնով (պատի շինութիւնն եւս նրան թողնելով)։ Սոյն գումարի վրայ դպրոցներից եւս աւելացնելով 2585 ղուռն, Ղառղուն գիւղումը 3 հաբբա կալուածք գնեց (1 հաբբա գիւղի մլքից և 2 հաբբա աբառիքից), որից ստացւում է տարեկան 350 լիտր ցորեն, որպէս հողավարձ յօգուտ դպրոցներիս։

ՋՈՒԼՀԱԿԱՆՈՅ

Հոգաբարձութիւնս անցեալ տարի 'ի նկատի ունենալով որ դպրոցներիս արհեստագիտական ճիւղի Ջուլհականոցն հակառակ գործ դրուած ամեն միջոցների, աշակերտներ չի ունենում և այդ հնացած արհեստով հետաքրքրուողներ չեն գտնւում, որոշեց դիմել Կալկաթա, նոյն արհեստանոցի հիմնադիր Մեծարգոյ պարոնայք Աբգար և Ընկերութեան, խնդրելով որ բարեհաճի կամ դրամագլուխն աւելացնելով՝ միջոցներ ընձեռել հմուտ վարպետներ վարձելու և զանազան ընտիր տեսակի կտորներ գործելով Արհեստանոցը հետաքրքիր դարձնելու և կամ արտօնութիւն շնորհել արհեստը փոխելու և գործադրութիւն մտցնելու, որ ամեն մասամբ աւելի շահաւետ է քան ջուլհակութիւնը։

Ուրախ ենք յայտնելու, որ Մեծարգոյ Ընկերութիւնը 8 Յունիսի թիւ գրութեամբ (1915 թ.) ընդ առաջ գնալով Հոգաբարձութեանս առաջարկին, այսպէս է պատասխանում.

«Ստացանք Ձեր 28 Նոյ. թուակիր նամակը, որով յայտնում էք թէ փորձը ցոյց է տալիս որ մեծ դժուարութիւն կայ հմուտ վարպետներ գտնել Ջուլհակութեան գործը առաջ տանելու համար, թէ հանգամանաց փոփոխութեան պատճառով՝ ջուլհակութեան արհեստն աշակերտներ չի գրաւում և թէ գործը կանոնաւոր առաջ տանելու համար մեծ գումարի կարիք կայ, որից զուրկ է արհեստանոցը։ Ուստի առաջադրում էք ջուլհակութեան փոխարէն գործադրութիւն մտցնել, քանի որ ըստ Ձեր կարծեաց, յիշեալ արհեստը թէ աւելի պիտանի է և թէ մեծ թիւով աշակերտներ կարող է գրաւել, մանաւանդ որ վերջին տարիներում մեծ քանակութեամբ գորգեր են արտահանւում Եւրոպա և այդ արհեստը ծաղկած է նաև հայերի մէջ։

Այդ հանգամանաց ներքոյ, մենք սրտանց ընդունելով Ձեր առաջարկը, սրանով արտօնում ենք Ձեզ ջուլհակութեան փոխարէն գործադրութիւն մտցնել, որի առթիւ գոհ կլինինք որ գործադրութիւնն սկսելուն պէս, իրազեկ կացուցանէք մեզ։

. . . Քիչ յետոյ մեր Արհեստագիտական դպրոցի եկամուտը կաւելանայ, հնարաւորութիւն տալով Ձեզ գործն ընդարձակելու և Արհեստանոցն օգտակար դարձնելու 'ի նպաստ Նոր-Ջուղայի հայ հասարակութեան»։

Հոգաբարձութիւնս մտադիր է առաջիկայ ուսումն. տարին կատարել այդ փոփոխութիւնը։

ԲԱՏԱԻԻԱՅԻ ՀԱՅ ԱԶԳ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՑ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄԸ

Հոգաբարձութիւնս Բատաւիայի Հայ ազգ. հաստատութեանց Պատ. Վարչութիւնից 10 Հոկտ. թիւ մի գրութիւն ստացաւ, որով յայտնել էր թէ նոր որոշման համաձայն, յիշեալ Պատուարժան Վարչութեան նպաստների հաշուին այսուհետև միայն այն Զուղայեցի երեխաները կ'ընդունուին Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի ձրիավարժ աշակերտաց շարքում, որոնք Հոգաբարձութիւնից սաւարտական վկայական ստացած կլինին և Առաջնորդ. Խորհրդարանից ևս յանձնարարուած կլինին, որպէս արժանաւոր՝ բարձր կրթութիւն ստանալու։

Հոգաբարձութիւնս Պատ. Վարչութեան պատուիրանի համաձայն, յիշեալ որոշումը տպագրելով՝ յայտարարեց ի գիտութիւն Նոր-Զուղայի հասարակութեան։

Դպրոցներիս երկարամեայ կրօնուսոյց Արժ. Տէր Եսայի խաչակիր քահ. Տէր Ս. Յովհաննէսեանն իր գործերի շատութեան պատճառով հրաժարուել է ուսուցչութիւնից և առաջիկայ տարեսկզբից այլևս շարունակելու չէ պաշտօնը։ Հոգաբարձութիւնս գնահատելով դպրոցներիս արժանաւոր ուսուցչի 25-ամեայ բեղմնաւոր գործունէութիւնը, հրապարակաւ յայտնում է նրան իր շնորհակալութիւնը։

Վերջացնելով սոյն համառօտ տեղեկագիրը, Հոգաբարձութիւնս անկեղծ շնորհակալութիւն է յայտնում դպրոցներիս բոլոր բարերարներին, նուիրատուներին և աշխատաւորներին, որոնք իրենց սրտին մօտ զգալով մեր մատաղ սերնդի դաստիարակութեան սրբազան գործը, չեն խնայել իրենց նիւթական և բարոյական օժանդակութիւնը։

Նոր – Զուղա,
19-ին Յունիսի 1916 թ.

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ, Գ. ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՒ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՃԻՒՂԵՐԻ

1915—1916 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐՈՒԱՅ



ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆԱՅ

1 9 1 6

ՋՈՒՂԱ—ՍՊԱՀԱՆ

Հաշուեկշիռ Եր-և-մտից Ազգ. Կեդր. Տղայոց, Գէորգ-Քանանեան վան 1915—16 ուսումն. տարւոյ, ի միոյ

ՄՈՒՏՔ

	Ղրան	Սէնք	Ղրան	Սէնք
Առ մին Օգոստոսի 1915 թ. պատրաստի .			486	60
Ստացուած նպաստներ				
Մեծ. պ. պ. Սէթ Պողոս և Ընկերութեան միամեայ 1916 թուի 200 Անգլ. ոսկու նպաստը .			9,250	
Ջավայաբնակ Մեծ. պ. Գէորգ Տէր Ղ. Աբգարեանից իր տան և այգու վարձերը՝ իբրև նպաստ դպրոցներիս չքաւոր աշակերտաց օգտին .			790	
Սինկափուրի Ստեփաննոս Պողոս և Ընկ. անցեալ 1915 և սոյն 1916 թուերի համար՝ 480 ռուփիք			1,691	35
Ցիշեալ Ընկերութիւնից Ս. Կատարինեան Օր. դպրոցին պատկանելի 757. 50 մառչիլի երկու տարւոյ տոկոսներն			542	60
Վեհափառ Շահի տարեկան նպաստը .			245	
Ս. Յովհաննու Եկեղեցւոյ Վարչութիւնից Եկեղեցապատկան պանդոկի տարեկան վարձի կէս մասը 1915 թուի համար			200	
Տարեկան նպաստ՝				
Ս. Ամենափրկչեան Հոգեոր Դպրանոցից .	1,500			
Ս. Կատարինեան կուսանաց մենաստանից .	500			
Ս. Գրիգոր Լուսաւորիչ և Ս. Գէորգ եկեղեցիներից	500			
Ս. Ներսէս Եկեղեցուց	200			
Ս. Սարգիս Եկեղեցուց	100		2,800	
Ներկայացումների հասոյթից 10 % . .	548	30		
Գ. Թադէոս Խ Աբգարեանից . . .	900			
Մի Օրիորդից	20		1,468	30
Հանգ. Ա. Կրէտեանի կտակած գումարի տոկոսներ				
Ստացուած հանգ. Աւետիք Կրէտեանի կտակած գիւղը 6507—70—ի սոյն տարւոյ տոկոսը 32—6—9			1,261	15
Աշակերտական թոշակադրամներ				
Ստացուած թոշակադրամ դպրոցներիս կարողաւոր աշակերտ—աշակերտուհիներից . .			4,159	
Եկեղեցեաց Դանձանակադրամներ				
Ստացուած Նոր—Ջուղայի Եկեղեցեաց դանձանակադրամներից			79	10
Գ. Քանանեան Դպրոցի Դրամագլխի տոկոս				
Ստացուած տեղիս Կայս. Բանկից 25 հազար թուման տոկոսը՝ 6 Յունուար—10 Սեպտ. 1915 թ.			5,083	35
Փոխադրելի			28,056	45

և Ս. Կատարինեան Օրիորդաց Ուսումնարանաց Նոր-Ջուղայի, Օգոստոսի 1915—ց'31 Յուլիսի 1916 ամի։

ԵԼՔ

	Ղրան	Սէնք	Ղրան	Սէնք
Ուսուցչական ռոճիկներ				
Վճարուած ուսումնական տարւոյ ընթացքում ռոճիկներ ուսուցիչներին և վարժուհիներին			58,750	
Ծառաների ռոճիկներ				
Դպրոցներիս ծառաների մի տարւոյ ռոճիկները			4,603	
Դասական պիտոյքներ				
Դասական պիտոյքներ գործածուած սոյն ուսումն. տարւոյ ընթացքում . . .			568	20
Մաներ ծախքեր				
Դպրոցական մաներ ծախքեր և զանազան իրերի գին			1,352	20
Տպագրական ծախքեր				
Վճարուած Ս. Ամենափրկչեան վանքի տպարանին դպրոցական զանազան տպագրութեանց ծախքեր և թղթի գին			415	
Պոստ—Հեռագրի ծախքեր				
Նամակների և հեռագրերի ծախք . .			146	45
Կահ—Կարասիք				
Նոր սեղաններ, նստարաններ, գրատախտակներ և հների նորոգութիւն . . .			839	55
Կենսաթոշակ				
Վճարուած պ. Ե. Դաւթեանին մի տարւոյ կենսաթոշակ			1,800	
Քարտուղարի ռոճիկ				
Հոգաբարձական քարտուղարի մի ամեայ ռոճիկը			600	
Մանկապարտէզի նիւթեր				
Մանկապարտէզի համար գնուած զանազան նիւթեր			195	55
Շինութեանց եւ կալուածոց նորոգութիւն				
Զանազան անհրաժեշտ նորոգութեանց ծախքեր երեք դպրոցներում և կալուածներում .			875	50
Փոխադրելի			70,075	45

ՄՈՒՏՔ

	Ղռան	Սենք	Ղռան	Սենք
Փոխադրուած			28,056	45
Կալուածական վարձեր				
Հանգ. Գրիգոր Գասպարեանի կտակած տան և այգու մի տարուայ վարձերը . .	570			
Հանգ. Տիրուհի Բալասան Տէր Սարգսեանի կտակած այգու վարձը	140		710	
Բոլորան գիւղի բերքը				
Բոլորան գիւղի 1915 թ. ցորենի և գարու արդիւնքները	28,336			
Ստացուած պարսիկ ուղտապանից՝ 1913 թուից մնացած իւր պարտքը	456		28,792	
Զիգան գիւղի բերքը				
Զիգան գիւղի 1915 թ. ցորենի և գարու վաճառումից գոյացուած			9,203	05
Ղարղուն գիւղի բերքը				
Ստացուած Ղարղուն գիւղի դպրոցապատկան 3 հարբա կալուածքի 150 լիտր իջարայի վաճառքից			510	
Փոխարինաբար ստացուած գումարներ				
Յովսէփ Պողոսեանեանի Աւանդի Պատ. Յանձնաժողովից	20,000			
Աբեղեանական դպրոցի գումարից .	7,250		27,250	
Կանանց Բարեգ. Ընկ. հաշիւ				
Ստացուած Կանանց Բարեգ. Ընկ. Պատ. վարչութիւնից Ղարղուն գիւղի իւր 3 հարբա կալուածքի ցորենի քրէհը, որ վճարել էր Հոգաբարձութիւնս			135	50
Պ. եւ Ս. Ժամկոչեանների հաշիւ				
Ստացուած Պ. և Տ. Ժամկոչեաններից անցեալ 1915 թ. արուած կանխավճարը . .			1,605	70
Փոխադրելի			96,262	70

ԵԼՔ

	Ղռան	Սենք	Ղռան	Սենք
Փոխադրուած			70,075	45
Վառելիք				
Դպրոցների համար վառելափայտի գին .			2,057	50
Նպաստներ				
Բաղդասար ծառային՝ պաշտօնից արձակելիս	400			
Նոր տարուայ առթիւ ծառաներին զգեստաւորելի փոխարէն	167	50		
Զքաւոր աշակերտաց դասական պիտոյքների գին	287	50		
Մի զքաւոր գիւղացու (Բոլորան գիւղից) .	30		885	
Թերթերի բաժնեգներ				
«Աղբիւր—Տարազ»ի և «Հասկերի» մի տարուայ բաժնեգին			57	50
Կալուածոց հարկեր				
Դպրոցների կալուածոց 1916.թ. հարկերը .			97	75
Գեղեցկարուեստ				
Վճարուած Ս. Կատարինեան Կուսանաց մենաստանի 1916 թ. գեղանվարձը . .			500	
Հոգեւոր Դպրանոցի հաշիւ				
Վճարուած Հոգևոր Դպրանոցի Բոլորան գիւղի $^1/_6$ բաժնի (1 գօնգի) զուտ արդիւնքը .			2,996	80
Բոլորան գիւղի ծախքեր				
Բոլորան գիւղի բերքը Ջուղա փոխադրելու և այլ ծախքեր			10,781	10
Զիգան գիւղի ծախքեր				
Զիգան գիւղի բերքը Ջուղա փոխադրելու և այլ ծախքեր	3,506	65		
Նոյն գիւղի սոյն 1916 թ. կառավարութեան հարկը	811	70		
Գնուած մի հատ ձի գիւղի պէտքերի համար	410			
Գնուած մի զոյգ պատուհան դպրոցապատկան ամբարի համար	25		4,753	35
Փոխադրելի			92,204	45

ՄՈԽՏ Ք

	Դրամ	Սենք	Դրամ	Սենք
Փոխադրուած			96,262	70
Այլ եւ այլ մուտքեր				
Մանկապարտէզի ձեռագործների վիճակախաղից դոյացած	90			
Աշակերտուհիների պատրաստուած ձեռագործների վաճառքից դոյացուած . . .	217			
Գին վաճառուած հում աղիւսի 76 ղ. վաճառուած ջրի՝ 5 դրամ.	81		388	
Գումարն է			96,650	70

Ծանօթ. ա. Ուսումնարաններս ունէին առ մին Յունուարի 1916 ամի
ի խնամս Ս. Յովհ. Եկեղ. Հայոց Բաթաւիոյ
Կենտրոնականն . . . . . Գիլդր 10,300—
Ս. Կատարինեան օր. Դպր. . . . » 7,400—

բ. Ի խնամս Ս. Լուս. Եկեղ. Հայոց Սինկափուրայ Մառիլք 757—50

1 Օգոստոսի 1916 թ.

Հոգաբարձութիւն Ազգ.

Նախագահ՝

Ներկայացուցիչ ս. Վ. Փանանեանի՝

Գանձապահ՝

Անդամներ՝

ԵԼՔ

	Դրամ	Սենք	Դրամ	Սենք
Փոխադրուած			92,204	45
Ղարղուն գիւղի ծախքեր				
Ղարղուն գիւղի 6 հաբբա կալուածքի բերքը Ջուղա փոխադրելու ծախք . . .			271	
Մնայ առ մին Օգոստոսի 1916 թ. . .			4,175	25
Գումարն է			96,650	70

գ. Սպահանի Կայսերական Բանքում Գէորգ Փանանեան Դպրոցի և մանկապարտէզի դրամագլուխը դրան 250,000—
Հանգ. տ. Սարրա Աղանեանի կտակածը » 1,000—
» Տէր Իսահակ Ամբարչեանի կտակածը » 1,000—

դ. Մակասարի Մեծապ. Միքայէլ Ստեփաննոս և Ընկերութեան վաճառատանը հանգ. Աւետիք Ն. Կրէտեանի կտակած գումարը . . . Գիլդր 6,507—70

Ի Նոր—Ջուղա

Երկեռ. դպրոցների

Եպնիկ վարդապետ Երկարակեցեան

Մ. Ս. Պ. Աղանուր

Ներսէս Դաւթեան

Աղանուր Յ. Կարապետեան
Մինաս Յ. Միքայէլեան
Մ. Յ. Բամբանեան
Տրդատ Թ. Աբգարեանց
Շ. Շահնազարեան
Յ. Ստեփաննոսեան
Յ. Մինասեան

Հաշուեկշիռ Եր-և-մտից Ազգային Արհեստագիտական

ՄՈՒՏՔ

	Ղռան	Սենք	Ղռան	Սենք
Առ մին Օգոստոսի 1915 թ. պատրաստ .			10,656	50
Կօշկակարանոցի հաշիւ				
Ստացուած կօշկակարանոցի 12 ամիսների մուտքը			12,934	
Ջուլհականոցի հաշիւ				
Ստացուած Ջուլհականոցի 9 ամիսների մուտքը			1,708	50
Աբհեստ. դպրոցների դրամագլխի տոկոսներ				
Ստացուած Մեծ. պ. պ. Աբգարեանց դրամագլխի ա. վեցամսեայ տոկոսները ռուփիք 622-15-9	2,678	85		
բ. » » » 622- 3-9	1,648	90	4,327	75
Նպաստից հաշիւ				
Ստացուած Սինկափուռի Մեծ. պ. պ. Սեւփանոս Պօղոս և Ընկերութիւնից ռուփիք 240 1915 և 1916 թուերի նպաստը յօգուտ Աբհեստագիտական դպրոցների			845	30
Գումարն է			30,471	60

1 Օգոստոսի 1916 թ.

Հոգաբարձութիւն Ազգ.

Նախագահ՝

Գանձապահ՝

Անդամներ՝

Դպրոցների 1 Օգոստոսի 1915 – ց'31 Յուլիսի 1916 ամի։

ԵԼՔ

	Ղռան	Սենք	Ղռան	Սենք
Կօշկակարանոցի հաշիւ				
Վճարուած կաշեղինաց գին . . .	11.323	95		
» նիւթեղինաց գին . . .	628	35		
» հաշուապահի, վարպետի և աշակերտների վարձեր . .	4,535			
» մանր ծախքերի համար . .	86	55		
» պօստի ծախք՝ Թէհրանից կաշիներ բերելու համար . . .	135	75		
» Վառելիքի գին . . .	48	50	16,758	10
Ջուլհականոցի հաշիւ				
Վճարուած պ. Խ. ին 7 ամսուայ վարձ՝ Ջուլհականոցի կտորները վաճառելու համար .			210	
Պահանջի հաշիւ				
Վճարուած ազգ. դպրոցների տուսմարին փոխարինաբար			7,250	
Բալանս առ մին Օգոստոսի 1916 թ. . .			6,253	50
Գումարն է			30,471	60

ի Նոր—Ջուղա

Երկսեռ Դպրոցների

Եղնիկ վարդապետ Երկարակեցեան

Ներսէս Դաւթեան

Աղանուր Ց. Կարապետեան

Մինաս Ց. Միքայէլեան

Մ. Ց. Բամբանեան

Տրդատ Թ. Աբգարեան

Շ. Շահնազարեան

Ց. Սեւփանոսեան

Ց. Մինասեան

Առաջնորդական Խորհրդարանս Թեմիս Հայոց Պարսկա–Հնդկաստանի քննելով զեկուցումս Ազգային Երկսեռ Ուսումնարանաց Նոր-Ջուղայի, սկսեալ ի միոյ Օգոստոսի 1915 ց՝31 Յուլիս 1916 ամի, ուղիղ գտաւ, զոր վաւերացուցանէ ստորագրութեամբ Նախանդամոյ և Անդամոց իւրոց, յ7 Օգոստոսի 1916 ամի, ի Ս. Ամենափրկիչ վանս Նոր-Ջուղայի։

Նախանդամ Խորհրդարանի՝ Եղնիկ վ. Երկարակեցեան

Անդամք՝ » Եսայի քհնյ. Տէր Ս. Յովհաննէսեան
Կարապետ քհնյ. Թումիկեան
Վարդան քհնյ. Ս. Վարդանեան

20093
2013

2098-2002